

ՀԱՇՎԱՐԿ ԱՎԵԼԱՑՎԱԾ ԱՐԺԵՔԻ ՀԱՐԿԻ	1. Փաստաթղթի հերթական համարը				_____ (լրացվում է հարկային մարմնի կողմից)			
2. Հարկ վճարողի հաշվառման համարը								
3. Հարկ վճարողի անվանումը								
4. Հարկ վճարողի գտնվելու վայրը (բնակության վայրը)								
5. Հաշվետու ժամանակաշրջանը	Տարի				Ամիս			Եռամսյակ
(հազար դրամ)								

ԱԱՀ-ի կրեդիտ		[Ա]. Հարկման բազա	[Բ]. ԱԱՀ կրեդիտ
6. ԱԱՀ-ի 20% դրույքաչափով հարկվող գործարքների			
7. Ճշգրտող հարկային հաշիվներով գործարքների		X	X
1) նվազեցում			
2) ավելացում			
8. ԱԱՀ-ի 16,67% հաշվարկային դրույքաչափով հաշվարկվող			
9. ԱԱՀ-ի գծով այլ հարկային պարտավորություն		X	
10. Մատակարարի անունից դուրս գրված ճշգրտող հարկային հաշիվներով գործարքների		X	X
1) նվազեցում		X	
2) ավելացում		X	
11. ԱԱՀ-ի գրոյական դրույքաչափով հարկվող գործարքների, այդ թվում՝			X
1) Օրենքի հոդվածի համարը	2) Օրենքի հոդվածի կետի համարը	X	X
			X
			X
12. ԱԱՀ-ից ազատված (հարկվող օբյեկտ չհամարվող) գործարքների, այդ թվում՝			X
1) Օրենքի հոդվածի համարը	2) Օրենքի հոդվածի կետի համարը	X	X
			X
			X
13. Առևտրի հարկով հարկվող գործունեությունից			X
14. Հաստատագրված վճարներով հարկվող գործունեությունից			X
15. Հաշվարկված ԱԱՀ-ի հարկային պարտավորությունների (ԱԱՀ-ի կրեդիտի) ավելացում		X	
16. Հաշվարկված ԱԱՀ-ի հարկային պարտավորությունների (ԱԱՀ-ի կրեդիտի) պակասեցում		X	
17. Ընդամենը ԱԱՀ-ի կրեդիտ		[Ա]. Հարկման բազա	[Բ]. ԱԱՀ կրեդիտ
[Ա]=[6.Ա]-[7.1Ա]+[7.2Ա]+[8.Ա]-[8.Բ]+[11.Ա]+[12.Ա]+[13.Ա]+[14.Ա]			
[Բ]=[6.Բ]-[7.1Բ]+[7.2Բ]+[8.Բ]+[9.Բ]-[10.1Բ]+[10.2Բ]+[15.Բ]-[16.Բ]			

ԱԱՀ-ի դեբետ	[Ա]. Արժեք	[Բ]. ԱԱՀ դեբետ
18. Արցախի Հանրապետության տարածք Հայաստանի Հանրապետության մաքսային սահմանով ներմուծված ապրանքների		
19. Հայաստանի Հանրապետության տարածքում ձեռք բերված ապրանքների ու ծառայությունների		
20. Արցախի Հանրապետության տարածքում ձեռք բերված		

ապրանքների և ծառայությունների			
21. Ձեռքբերումներին վերաբերող ճշգրտող հարկային հաշիվներով գործարքների		X	X
1) նվազեցում			
2) ավելացում			
22. Ձեռք բերված ապրանքների մասով դեբետի հետաձգում (գումարը)		X	
23. Հաշվանցման (պակասեցման) ենթակա ԱԱՀ-ի գումարի ճշգրտման ընդհանուր գումարը, այդ թվում՝ ըստ ճշգրտման հիմքերի		[Ա]. Ավելացում	[Բ]. Պակասեցում
1) Օրենքի հոդվածի համարը	2) Օրենքի հոդվածի կետի համարը	X	X
24. Ընդամենը ԱԱՀ-ի դեբետ ([18.Բ]+[19.Բ]+[20.Բ]-[21.1Բ]+[21.2Բ]-[22.Բ]+[23.Ա]-[23.Բ]) Եթե գործողության արդյունքը՝ 1) հավասար է 0-ի՝ [Ա] և [Բ] վանդակներում լրացվում է «0». 2) դրական է՝ լրացվում է [Ա] վանդակը. 3) բացասական է՝ լրացվում է [Բ] վանդակը		[Ա]. դրական	[Բ]. բացասական
25. Ներմուծված այն ապրանքների, որոնց մասով Օրենքի 6.1-ին հոդվածի համաձայն առաջանում է Հայաստանի Հանրապետության պետական բյուջե վճարման ենթակա ԱԱՀ-ի գումար		[Ա]. Հարկման բազա	[Բ]. Հաշվարկված ԱԱՀ գումար
26. Հաշվետու ժամանակաշրջանի համար հաշվարկված ԱԱՀ 1) եթե լրացված է [24.Ա] վանդակը՝ ապա ([17.Բ] - [24.Ա]). 2) եթե լրացված է [24.Բ] վանդակը՝ ապա ([17.Բ] + [24.Բ]). 3) եթե [24.Ա] և [24.Բ] վանդակներում լրացված են «0»՝ ապա ([17.Բ]): Եթե տվյալ գործողության արդյունքը դրական է՝ լրացվում է [Ա] վանդակը, եթե բացասական՝ լրացվում է [Բ] վանդակը, եթե հավասար է 0-ի՝ [Ա] և [Բ] վանդակներում լրացվում է «0»		[Ա]. Ենթակա է բյուջե վճարման (կրեդիտ)	[Բ]. Ենթակա է հաշվանցման (դեբետ)

Կազմակերպության տնօրեն
(անհատ ձեռնարկատեր)

_____ (ստորագրությունը)

_____ (անունը, ազգանունը)

Կ.Տ.

Հաշվապահ

_____ (ստորագրությունը)

_____ (անունը, ազգանունը)

Հարկային մարմին առձեռն ներկայացնելու դեպքում հաշվարկը լրացվում է երկու օրինակից: Հարկային մարմնի կողմից գրանցվելուց հետո մեկ օրինակը հանձնվում է հարկ վճարողին:

Կ Ա Ր Գ
ԱՎԵԼԱՑՎԱԾ ԱՐԺԵՔԻ ՀԱՐԿԻ ՀԱՇՎԱՐԿԻ ՁԵՎԻ ԼՐԱՑՄԱՆ

1. ՀԻՄՆԱԿԱՆ ԴՐՈՒՅԹՆԵՐ

1. Ավելացված արժեքի հարկի հաշվարկի ձևը (այսուհետ՝ հաշվարկ) ներկայացվում է հարկային մարմին «Ավելացված արժեքի հարկի մասին» օրենքի (այսուհետ՝ Օրենք) 33-րդ հոդվածին համապատասխան:

2. Հաշվարկի ճշտումները կատարվում են Օրենքի 33-րդ հոդվածին համապատասխան:

3. Հաշվարկում արժեքային մեծությունները լրացվում են հազար դրամներով՝ ստորակետից հետո մեկ նիշի ճշտությամբ: Հաշվարկի վանդակներում արժեքային մեծության բացակայության դեպքում հաշվարկի այդ վանդակներն ընդունվում են «0» (զրո):

4. Հաշվարկի 1-ին կետը լրացվում է հարկային մարմնի կողմից:

5. Հաշվարկի 2-րդ կետում լրացվում է հարկ վճարողի հաշվառման համարը (ՀՎՀՀ):

6. Հաշվարկի 3-րդ կետում լրացվում է կազմակերպության լրիվ անվանումը, իսկ անհատ ձեռնարկատեր համարվող ֆիզիկական անձի դեպքում՝ անունը, ազգանունը:

7. Հաշվարկի 4-րդ կետում լրացվում է կազմակերպության գտնվելու վայրը, իսկ անհատ ձեռնարկատեր համարվող ֆիզիկական անձի դեպքում՝ բնակության վայրը:

8. Հաշվարկի 5-րդ կետում լրացվում է այն հաշվետու ժամանակաշրջանը, որի համար ներկայացվում է հաշվարկը: Եթե տվյալ հարկ վճարողի համար հաշվարկի ներկայացման հաշվետու ժամանակաշրջան է համարվում ամիսը, ապա լրացվում են միայն տարվա և ամսվա համար նախատեսված վանդակները: Եռամսյակային կտրվածքով հաշվարկ ներկայացնող անձինք ամսվա համար նախատեսված վանդակները չեն լրացնում:

2. ՀԱՇՎԱՐԿԻ ԼՐԱՑՄԱՆ ԿԱՐԳԸ

9. Հաշվարկի 6-րդ կետի [Ա] վանդակում լրացվում է ավելացված արժեքի հարկի (այսուհետ՝ ԱԱՀ) 20 տոկոս դրույքաչափով հարկվող գործարքների հարկման բազան՝

առանց ԱԱՀ-ի, իսկ [Բ] վանդակում՝ այդ հարկման բազայի նկատմամբ հաշվարկված ԱԱՀ-ի գումարը:

10. Հաշվարկի 7-րդ կետում լրացվում են Օրենքի 18-րդ հոդվածով սահմանված դեպքերում դուրս գրված ճշգրտող հարկային հաշիվներով (բացառությամբ՝ Օրենքի 8-րդ հոդվածի 4-րդ կետով սահմանված դեպքերում մատակարարի անունից (Օրենքի 18-րդ հոդվածի վեցերորդ պարբերություն) դուրս գրված հարկային հաշիվներով) գործարքների հարկման բազան և հաշվարկված ԱԱՀ-ի գումարը: Հաշվարկի 7-րդ կետի՝

1) 1-ին ենթակետի [Ա] վանդակում լրացվում է Օրենքի 33-րդ հոդվածի հինգերորդ պարբերության 1-ին կետով սահմանված դեպքում՝ տվյալ հաշվետու ժամանակաշրջանում դուրս գրված ճշգրտող հարկային հաշիվներով (բացառությամբ՝ Օրենքի 8-րդ հոդվածի 4-րդ կետով սահմանված դեպքերում մատակարարի անունից (Օրենքի 18-րդ հոդվածի վեցերորդ պարբերություն) դուրս գրված հարկային հաշիվներով) գործարքների հարկման բազան՝ առանց ԱԱՀ-ի, իսկ [Բ] վանդակում՝ այդ հարկման բազայի նկատմամբ հաշվարկված ԱԱՀ-ի գումարը:

2) 2-րդ ենթակետի [Ա] վանդակում լրացվում է Օրենքի 33-րդ հոդվածի հինգերորդ պարբերության 2-րդ կետով սահմանված դեպքում՝ դուրս գրված ճշգրտող հարկային հաշիվներով (բացառությամբ՝ Օրենքի 8-րդ հոդվածի 4-րդ կետով սահմանված դեպքերում մատակարարի անունից (Օրենքի 18-րդ հոդվածի վեցերորդ պարբերություն) դուրս գրված հարկային հաշիվներով) գործարքների հարկման բազան՝ առանց ԱԱՀ-ի, իսկ [Բ] վանդակում՝ այդ հարկման բազայի նկատմամբ հաշվարկված ԱԱՀ-ի գումարը:

11. Հաշվարկի 8-րդ կետի [Ա] վանդակում լրացվում է ապրանքի մատակարարման, աշխատանքի կատարման կամ ծառայության մատուցման դիմաց ԱԱՀ-ի գումարը ներառող հատուցման ընդհանուր գումարը (ներառյալ՝ ԱԱՀ-ի գումարը), իսկ հաշվարկի 8-րդ կետի [Բ] վանդակում՝ ԱԱՀ-ի գումարը, որը որոշվում է ԱԱՀ-ի գումարը ներառող հատուցման գումարի նկատմամբ կիրառելով 16,67 տոկոս հաշվարկային դրույքաչափ:

12. Հաշվարկի 9-րդ կետում լրացվում է ԱԱՀ-ի գծով այլ հարկային պարտավորության ընդհանուր գումարը, այդ թվում՝

1) հաշվարկի 11-րդ և 12-րդ կետերում նշված գործարքների հետ չկապված պարտավորությունների գումարները (մասնավորապես՝ Օրենքի 8-րդ հոդվածի 4-րդ կետով սահմանված դեպքերում առաջացած պարտավորության գումարը)։

2) Օրենքի 19-րդ հոդվածով սահմանված սահմանափակումների խախտմամբ դուրս գրված հարկային հաշիվներում առանձնացված ԱԱՀ-ի գումարները։

3) ապրանքների մատակարարման, աշխատանքների կատարման և ծառայությունների մատուցման անհատույց (այդ թվում՝ մասնակի հատուցմամբ) գործարքներից Օրենքով սահմանված կարգով հաշվարկվող ԱԱՀ-ի գումարները։

13. Հաշվարկի 10-րդ կետի 1-ին ենթակետում լրացվում է Օրենքի 33-րդ հոդվածի հինգերորդ պարբերության 1-ին կետով սահմանված դեպքում տվյալ հաշվետու ժամանակաշրջանում Օրենքի 8-րդ հոդվածի 4-րդ կետին համապատասխան մատակարարի անունից դուրս գրված ճշգրտող հարկային հաշիվներով գործարքների հարկման բազայի նկատմամբ հաշվարկված ԱԱՀ-ի գումարը (ԱԱՀ-ի նվազեցում), իսկ հաշվարկի 10-րդ կետի 2-րդ ենթակետում՝ Օրենքի 33-րդ հոդվածի հինգերորդ պարբերության 2-րդ կետով սահմանված դեպքում Օրենքի 8-րդ հոդվածի 4-րդ կետին համապատասխան մատակարարի անունից դուրս գրված ճշգրտող հարկային հաշիվներով գործարքների հարկման բազայի նկատմամբ հաշվարկված ԱԱՀ-ի գումարը (ԱԱՀ-ի ավելացում)։

14. Հաշվարկի 11-րդ կետում լրացվում է Օրենքի 16-րդ հոդվածով սահմանված ԱԱՀ-ի զրոյական դրույքաչափով գործարքների հարկման բազան։ Ընդ որում, հաշվարկի 11-րդ կետի 1-ին և 2-րդ ենթակետերով նախատեսված սյունակներում՝ ըստ առանձին տողերի լրացվում են Օրենքի այն հոդվածի և կետի համարները, որոնց համաձայն այդ գործարքները համարվում են ԱԱՀ-ի զրոյական դրույքաչափով հարկվող գործարքներ, իսկ համապատասխան տողի [Ա] վանդակում լրացվում է այդ գործարքների հարկման բազան։

15. Հաշվարկի 12-րդ կետի [Ա] վանդակում լրացվում է Օրենքի 15-րդ հոդվածով սահմանված ԱԱՀ-ից ազատված, Օրենքի 7-րդ հոդվածով սահմանված հարկվող օբյեկտ չհամարվող (բացառությամբ Օրենքի 7-րդ հոդվածի 3-րդ կետում նշված)

գործարքների ու գործառնությունների, ինչպես նաև միջազգային համաձայնագրերով կամ այլ օրենքներով ԱԱՀ-ով հարկվող գործարքների մասով ԱԱՀ-ից ազատման արտոնություն սահմանված լինելու դեպքում այդ գործարքների ու գործառնությունների հարկման բազան: Հաշվարկի 12-րդ կետի 1-ին և 2-րդ ենթակետերով նախատեսված սյունակներում՝ ըստ առանձին տողերի լրացվում են Օրենքի այն հոդվածի և կետի համարները, որոնց համաձայն այդ գործարքները (գործառնությունները) համարվում են ԱԱՀ-ից ազատված, հարկվող օբյեկտ չհամարվող գործարքներ կամ գործառնություններ, իսկ համապատասխան տողի [Ա] վանդակում լրացվում է այդ գործարքների (գործառնությունների) հարկման բազան: Օրինակ, հանրակրթական հիմնական ծրագրերի շրջանակներում կատարված աշխատանքների մասով տվյալները հաշվարկում արտացոլվում են առանձին տողով՝ այդ տողի 12-րդ կետի 1-ին սյունակում լրացնելով «15» թիվը, 2-րդ սյունակում՝ «4» թիվը, իսկ [12.Ա] սյունակում՝ այդ գործարքի հարկման բազան:

16. Հաշվարկի 13-րդ կետում լրացվում է առևտրի հարկով հարկվող գործունեությունից իրացման շրջանառությունը:

17. Հաշվարկի 14-րդ կետում լրացվում է հաստատագրված վճարներով հարկվող գործունեությունից իրացման շրջանառությունը:

18. Հաշվարկի 15-րդ և 16-րդ կետերում համապատասխանաբար լրացվում են Օրենքով սահմանված դեպքերում հաշվարկված ԱԱՀ-ի գծով հարկային պարտավորության (ԱԱՀ-ի կրեդիտի) ավելացման կամ պակասեցման ենթակա գումարները:

19. Հաշվարկի 17-րդ կետի [Ա] վանդակում լրացվում է [6.Ա], [7.2Ա], [8.Ա], [11.Ա], [12.Ա], [13.Ա], [14.Ա] վանդակներում նշված թվերի հանրագումարի և [7.1Ա], [8.Բ] վանդակներում նշված թվերի տարբերությունը, իսկ [Բ] վանդակում լրացվում է [6.Բ], [7.2Բ], [8.Բ], [9.Բ], [10.2Բ], [15.Բ] վանդակներում նշված թվերի հանրագումարի և [7.1Բ], [10.1Բ], [16.Բ] վանդակներում նշված թվերի տարբերությունը:

20. Հաշվարկի 18-րդ կետի՝

1) [Ա] վանդակում լրացվում են Արցախի Հանրապետության տարածք Հայաստանի Հանրապետության մաքսային սահմանով ներմուծված ապրանքների մաքսային արժեքները (հարկման բազաները), այդ թվում՝ ներմուծված այն ապրանքների մասով,

որոնց ներմուծման պահին ԱԱՀ չի գանձվում կամ Հայաստանի Հանրապետության պետական բյուջե ԱԱՀ չի հաշվարկվում ու չի վճարվում.

2) [Բ] վանդակում լրացվում է ապրանքների ներմուծման համար Հայաստանի Հանրապետության պետական բյուջե վճարված (վճարման ենթակա) ԱԱՀ-ի ընդհանուր գումարը:

21. Հաշվարկի 19-րդ կետի՝

1) [Ա] վանդակում լրացվում են Հայաստանի Հանրապետության տարածքում ձեռք բերված ապրանքների, ընդունված աշխատանքների և ստացված ծառայությունների (այդ թվում՝ ԱԱՀ-ով չհարկված) ընդհանուր արժեքը՝ անկախ այն հանգամանքից՝ դրանց դիմաց մատակարարներին վճարում կատարվել է, թե ոչ.

2) [Բ] վանդակում լրացվում է ձեռք բերված ապրանքների, ընդունված աշխատանքների և ստացված ծառայությունների համար մատակարարների կողմից դուրս գրված հարկային հաշիվներում առանձնացված ԱԱՀ-ի ընդհանուր գումարը:

22. Հաշվարկի 20-րդ կետի [Ա] վանդակում լրացվում է հաշվետու ժամանակաշրջանում Արցախի Հանրապետության տարածքում ձեռք բերված ապրանքների, ընդունված աշխատանքների և ստացված ծառայությունների ընդհանուր հարկման բազան, իսկ [Բ] վանդակում՝ ապրանք մատակարարողների, աշխատանք կատարողների և ծառայություն մատուցողների կողմից դուրս գրված հարկային հաշիվներում առանձնացված ԱԱՀ-ի ընդհանուր գումարը: Սույն կետով ներառվում են տվյալ հաշվետու ժամանակաշրջանում ձեռքբերումների մասով մատակարարների կողմից դուրս գրված այն հարկային հաշիվներում արտացոլված տվյալները, որոնք ապրանքը ձեռք բերողի, աշխատանքն ընդունողի և (կամ) ծառայությունը ստացողի կողմից ստացվել և Օրենքի 19.1-ին հոդվածով սահմանված կարգով վավերացվել են մինչև հաշվարկի ներկայացման համար Օրենքի 33-րդ հոդվածի առաջին պարբերությամբ սահմանված վերջնաժամկետը՝ անկախ վճարումը բանկային փոխանցմամբ կատարած լինելու հանգամանքի: Այն դեպքերում, երբ տվյալ հաշվետու ժամանակաշրջանում ձեռքբերումների մասով հարկային հաշիվները մատակարարների կողմից դուրս են գրվում հաշվարկի ներկայացման համար Օրենքի 33-րդ հոդվածի առաջին պարբերությամբ սահմանված վերջնաժամկետից հետո, ինչպես նաև մատակարարների կողմից դուրս գրված հարկային հաշիվներն ապրանքը ձեռք

բերողի, աշխատանքն ընդունողի և (կամ) ծառայությունը ստացողի կողմից Օրենքի 19.1-ին հոդվածով սահմանված կարգով վավերացվում են հաշվարկի ներկայացման համար Օրենքի 33-րդ հոդվածի առաջին պարբերությամբ սահմանված վերջնաժամկետից հետո, այդ հարկային հաշիվների վերաբերյալ տեղեկատվությունը ներառվում է այդ հարկային հաշիվները Օրենքի 19.1-ին հոդվածով սահմանված կարգով վավերացնելու օրը ներառող հաշվետու ժամանակաշրջանի հաշվարկի 23-րդ կետում՝ որպես հաշվանցման ենթակա ԱԱՀ-ի գումարի ավելացում:

23. Հաշվարկի 21-րդ կետի 1-ին ենթակետի [Ա] վանդակում լրացվում է ձեռքբերումներին վերաբերող Օրենքի 33-րդ հոդվածի հինգերորդ պարբերության 1-ին կետով սահմանված դեպքերում՝ դուրս գրված ճշգրտող հարկային հաշիվներով գործարքների հարկման բազան՝ առանց ԱԱՀ-ի, իսկ [Բ] վանդակում՝ այդ հարկման բազայի նկատմամբ հաշվարկված ԱԱՀ-ի գումարը: Հաշվարկի 21-րդ կետի 2-րդ ենթակետի [Ա] վանդակում լրացվում է ձեռքբերումներին վերաբերող Օրենքի 33-րդ հոդվածի հինգերորդ պարբերության 2-րդ կետով սահմանված դեպքերում՝ դուրս գրված ճշգրտող հարկային հաշիվներով գործարքների հարկման բազան՝ առանց ԱԱՀ-ի, իսկ [Բ] վանդակում՝ այդ հարկման բազայի նկատմամբ հաշվարկված ԱԱՀ-ի գումարը:

24. Հաշվարկի 22-րդ կետում լրացվում է ձեռք բերված ապրանքների, ընդունված աշխատանքների և ստացված ծառայությունների դիմաց մատակարարների կողմից դուրս գրված հարկային հաշիվներում, Օրենքի 24²-րդ և 24³-րդ հոդվածների դեպքում՝ նաև ապրանքների ներմուծման մաքսային հայտարարագրերում առանձնացված ԱԱՀ-ի գումարի այն մեծությունը (մասը), որի մասով հաշվանցում կատարելու իրավունքի ձեռքբերման պահը, համաձայն Օրենքի 23-րդ, 24²-րդ և 24³-րդ հոդվածների, հետաձգվում է մինչև այդ հոդվածներով սահմանված ձեռքբերումների դիմաց վճարման պահը:

25. Հաշվարկի 23-րդ կետում լրացվում է Օրենքի համաձայն կատարվող վերահաշվարկների արդյունքում հաշվանցման (պակասեցման) ենթակա ԱԱՀ-ի գումարների ավելացումը կամ պակասեցումը՝ ըստ Օրենքով սահմանված հիմքերի՝ լրացնելով հոդվածի և կետի համարները: Մասնավորապես՝

1) ձեռք բերված և (կամ) ներմուծված ապրանքները, ընդունված աշխատանքները և (կամ) ստացված ծառայությունները վերագրվում են ԱԱՀ-ով հարկման օբյեկտ չհամարվող, ԱԱՀ-ից ազատված և առևտրի հարկով կամ հաստատագրված վճարներով հարկման ենթակա գործարքներին, որոնց մասով ԱԱՀ-ի հաշվանցումներ (պակասեցումներ) չեն կատարվում.

2) հաշվետու ժամանակաշրջանում հաշվանցվող ԱԱՀ-ի այն գումարները, որոնց մասով հաշվանցման իրավունքը հետաձգվել էր և Օրենքի 23-րդ և 24²-րդ հոդվածների համաձայն ենթակա է հաշվանցման տվյալ հաշվետու ժամանակաշրջաններում.

3) ԱԱՀ-ի այն գումարները, որոնց մասով Օրենքի 26-րդ հոդվածով սահմանված դեպքերում պետք է կատարվեն վերաձևակերպումներ.

4) ԱԱՀ-ի այն գումարները, որոնք Օրենքի 6.1-ին հոդվածի համաձայն՝ ԱԱՀ վճարողների կողմից ենթակա են հաշվանցման (հաշվարկված պարտավորություններից պակասեցման) դրանց վճարման օրն ընդգրկող հաշվետու ժամանակաշրջանի համար հարկային մարմին ներկայացվող հաշվարկով:

26. Հաշվարկի 24-րդ կետում լրացվում է դեբետագրման արդյունքը, ընդ որում, եթե՝

1) $([18.Բ]+[19.Բ]+[20.Բ]-[21.1Բ]+[21.2Բ]-[22.Բ]+[23.Ա]-[23.Բ])$ հավասար է 0-ի, ապա հաշվարկի 24-րդ կետի [Ա] և [Բ] վանդակներում լրացվում է «0».

2) $([18.Բ]+[19.Բ]+[20.Բ]-[21.1Բ]+[21.2Բ]-[22.Բ]+[23.Ա]-[23.Բ])$ մեծ է 0-ից (դրական է), ապա այդ հաշվարկի 0-ից տարբերվող թվի բացարձակ մեծությունը լրացվում է հաշվարկի 24-րդ կետի [Ա] վանդակում, իսկ [Բ] վանդակում լրացվում է «0».

3) $([18.Բ]+[19.Բ]+[20.Բ]-[21.1Բ]+[21.2Բ]-[22.Բ]+[23.Ա]-[23.Բ])$ փոքր է 0-ից (բացասական է), ապա այդ հաշվարկի 0-ից տարբերվող թվի բացարձակ մեծությունը լրացվում է հաշվարկի 24-րդ կետի [Բ] վանդակում, իսկ [Ա] վանդակում լրացվում է «0»:

27. Հաշվարկի 25-րդ կետում լրացվում է ներմուծված այն ապրանքների մաքսային արժեքը (հարկման բազան) և ԱԱՀ-ի գումարները, որոնք Օրենքի 6.1-ին հոդվածի համաձայն պետք է արտացոլվեն պարտավորության առաջացման հաշվետու ժամանակաշրջանի համար հարկային մարմին ներկայացվող հաշվարկում՝ որպես ներմուծված ապրանքների մասով Հայաստանի Հանրապետության պետական բյուջեի նկատմամբ պարտավորության գումարներ: Հաշվարկի 25-րդ կետում արտացոլված

գումարները հաշվետու ժամանակաշրջանում Արցախի Հանրապետության տարածքում իրականացված՝ ԱԱՀ-ով հարկման ենթակա գործարքների համար ԱԱՀ-ի պարտավորության ընդհանուր գումարի հաշվարկմանը չեն մասնակցում:

28. Հաշվարկի 26-րդ կետում լրացվում է տվյալ հաշվետու ժամանակաշրջանում պետական բյուջե վճարման ենթակա կամ հաշվանցման (բյուջեից վերադարձման) ենթակա ԱԱՀ-ի գումարները: Ընդ որում՝

1) եթե լրացված է հաշվարկի 24-րդ կետի [Ա] վանդակը, ապա ([17.Բ] - [24.Ա]) հաշվարկի 0-ից տարբերվող արդյունքը լրացվում է՝

ա. [Ա] վանդակում, եթե այդ արդյունքը դրական թիվ է, և [Բ] վանդակում լրացվում է «0».

բ. [Բ] վանդակում՝ բացարձակ արժեքով, եթե այդ արդյունքը բացասական թիվ է, և [Ա] վանդակում լրացվում է «0».

2) եթե լրացված է հաշվարկի 24-րդ կետի [Բ] վանդակը, ապա ([17.Բ] + [24.Բ]) արդյունքը լրացվում է [Ա] վանդակում, իսկ [Բ] վանդակում լրացվում է «0».

3) եթե հաշվարկի 24-րդ կետի [Ա] և [Բ] վանդակներում լրացված են «0»՝ ապա ([17.Բ]) վանդակի արդյունքը լրացվում է [Ա] վանդակում, իսկ [Բ] վանդակում լրացվում է «0».

4) եթե լրացված է հաշվարկի 24-րդ կետի [Ա] վանդակը, և ([17.Բ] - [24.Ա]) հաշվարկի արդյունքը հավասար է 0-ի՝ հաշվարկի 26-րդ կետի [Ա] և [Բ] վանդակներում լրացվում է «0»: